ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/12

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝

Մ. Ստեփանյանի (լիազորագիր, տրված՝ 30.01.2020թ.)

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 264.110.05665)

քննելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 29.01.2020թ. ներկայացված (29.01.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/12 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն 29.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման մասին (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. հունվարի 20-ի թիվ 1 որոշմամբ, որի Հրավերի թվով 4 չափաբաժիններից «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է 3-րդ և 4-րդ չափաբաժինները:

Հրավերի «Տեխնիկական Բնութագիր - Գնման Ժամանակացույց» Հավելված թիվ 1-ի «անվանումը» սյունակներում 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար գրված է միևնույն՝ «Դիալիզատոր 1» և «Դիալիզատոր 2» անվանումները, իսկ «տեխնիկական բնութագիրը» սյունակներում ներառված պահանջներում՝ այդ 2 ապրանքների համար, առկա է միևնույն՝ «…. մանրազերծման մեթոդը ….. գամմա ճառագայթմամբ ….» պահանջը:

Նշված մանրէազերծման մեթոդը հանդիսանում է միանվագ օգտագործման բուժպարագաների մանրէազերծման համար կիրառվող ռադիացիոն մանրէազերծում մեթոդի մի տարատեսակը:

Համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ի «Ներածություն» բաժնի երկրորդ պարբերության «…. Ռադիացիոն մանրէազերծումը դա ֆիզիկական պրոցես է, որը կապված է իոնիզացնող ճառագայթմամբ բժշկական պարագաների ճառագայթման հետ: Պարագաները ենթարկվում են ճառագայթման մասնագիտացված ռադիացիոն-տեխնոլոգիական կայանքներում՝ օգտագործելով 60Co կամ 137Cs ռադիոնուկլիդների գամմա ճառագայթման աղբյուրներ կամ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են (գեներացնում են) էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր: …. » սահմանումների, բժշկական պարագաների ռադիացիոն մանրէազերծումը իրականացվում է իոնիզացնող ճառագայթներով բժշկական պարագաներին 2 մեթոդներով ճառագայթելով, օգտագործելով՝

1. գամմա ճառագայթման աղբյուրներ,
2. էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, նույն հոդվածի 3-րդ մասը:

Պատվիրատուի կողմից Հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով «տեխնիկական բնութագիրը» սյունակներում հնարավորինս չափով ներառված չեն գնման առարկաների ամբողջական և համարժեք նկարագրությունները, որոնք առկա են ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական «ГОСТ ISO 8.651-2016» Ստանդարտում, համաձայն որի՝ բժշկական պարագաների ռադիացիոն մանրէազերծումը իոնիզացնող ճառագայթներով իրականացվում են 2 մեթոդներով, որոնցից միայն մեկի ներառումը Հրավերի «տեխնիկական բնութագիրը» սյունակներում ամբողջական չէ, և համարժեք չէ այն նկարագրությանը, որն առկա է ՀՀ-ում գործող ստանդարտում:

ՀՀ-ում գործող ստանդարտում առկա՝ ձեռք բերվող ապրանքի ստանդարտին վերաբերվող պայմանների հստակ նկարագրության ոչ ամբողջական ներառումը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 3-րդ մասով սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում բժշկական պարագաների ռադիացիոն մանրէազերծումը իոնիզացնող ճառագայթներով իրականացնող երկրորդ մեթոդով ռադիացիոն մանրէազերծման ենթարկված «Դիալիզատոր» անվանումով ապրանքները առաջարկող հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը Հրավերի թիվ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով:

«Խաչպար» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. հունվարի 20-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրել է, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին՝ ընդունելու որոշում նշված ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ հրավերի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ի լրումն բողոքի՝ Ընկերության կողմից 01.02.2020թ. ներկայացվել է գրություն, որով Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարելու օրվա դրությամբ չի հրապարակել գնումների պլանը:

Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ և 17-րդ կետերի՝

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Ընկերությունը խնդրել է ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-3 մասերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները,

դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգի 3-4-րդ չափաբաժինների համար պահանջվող տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջներին:

Այն հանգամանքը, որ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել 1-ից ավելի մասնակից («Ֆրեզեն» ՍՊԸ, «Թեոֆարմա» ՍՊԸ, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ) հաստատում է տեխնիկական բնութագրերի մրցակցային և գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան լինելը:

Ինչպես նաև հատկանշական է, որ օրենսդիրը սահմանում է պայման, որ պետք է մասնակցեն մեկից ավելի մասնակիցներ, այլ ոչ թե պետք է պարտադիր ապահովվի «Խաչպար» ՍՊԸ-ի մասնակցության հնարավորությունը:

Պատվիրատուն ապահովել է մեկից ավելի ընկերությունների մասնակցության հնարավորություն, որի արդյունքում էլ ներկայացվել է թվով 3 հայտ և մինչ բանակցային գործընթացի սկիզբը, արդեն իսկ ապահովված է շուրջ 43 տոկոս խնայողություն:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետը, մինչդեռ ներկայացված միջազգային ստանդարտում ներկայացված են ռադիացիոն մանրէազերծման մեթոդները, դրանց կիրառման պայմանները և պահանջները: Համաձայն ГОСТ 8.651-2016 ստանդարտի՝ գոյություն ունի ռադիացիոն մանրէազերծման երկու մեթոդ՝ գամմա ճառագայթման աղբյուրներ կամ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են էլեկտրոնային կամ արգելափակման ճառագայթման փնջեր:

Հատկանշական է, որ սահմանվել է երկու մեթոդ՝ կիրառելով «կամ» շաղկապը, որը հնարավորություն է տալիս ընտրել այդ մեթոդներից որևէ մեկը, այլ ոչ թե պարտադիր կերպով երկուսն էլ:

Պատվիրատուն նշել է նաև, որ որևէ միջազգային ստանդարտ չի կարող պարտադրել տեխնիկական բնութագրի ձևաչափ, քանի որ Կարգի 11-րդ կետի համաձայն՝ գնման հայտը (որի մեջ ներառված նաև տեխնիկական բնութագիրը) կազմում և հաստատում է պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը՝ հնարավորինս ներառելով ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ինչ վերաբերում է Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին, ապա նշված նորմի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը, այն է՝

1.	Դիալիզատոր 1	Գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 100մլ, մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:
2.	Դիալիզատոր 2	Գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.8 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ: Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ տեխնիկական բնութագրերը կազմվել են հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարության կողմից կազմված և շրջանառված հեմոդիալիզի պարագաների տեխնիկական բնութագրերին ներկայացվող նվազագույն պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ Ընկերությունը չարաշահում է բողոք ներկայացնելու իր իրավունքը, քանի որ վերջինս արդեն իսկ նույն հիմքերով բողոքարկել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով ընթացակարգը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 20.01.2020թ. կայացվել է Ընկերության բողոքը մերժելու մասին ԳԲՔԱ-ՆԳ-2020/98 որոշումը, որով ամրագրվել է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմված են Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ տեղեկագիր՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է՝ գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը…:

Նշված նորմից հստակ հետևում է, որ գնումների պլանի հրապարակման կարգը սահմանվում և հաստատվում է ՀՀ կառավարության կողմից, այլ ոչ թե «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ կառավարության 2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների կազմակերպման կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Սույն նորմով հրապարակման պայման և անհրաժեշտություն է հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերը, այսինքն օրենքով հստակ նախատեսվում է այն դեպքերը, երբ անհրաժեշտ է հրապարակել գնումների պլանը: Հատկանշական է, որ կարգավորման մեջ իմպերատիվ պայման չի դրվել առ այն, որ հրապարակումը պետք է լինի «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեղեկագրում հրապարակմամբ, այլ ուղղակի նշվում է, որ պետք է հրապարակված լինի:

Հատկանշական է նաև այն, որ 17-րդ կետով կարգավորվում է գնումների գործընթացի կազմակերպման իրավական հիմքը:

Նշված կարգավորումներից տպավորություն է ստեղծվում, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է Կարգի 17-րդ կետով սահմանված կարգավորմանը, սակայն նշված կարգավորումները վերլուծելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համատեքստում ակնհայտ է դառնում, որ այստեղ առկա է նորմատիվ իրավական ակտերի ԸՆԴՀԱՆՈՒՐ և ՀԱՏՈՒԿ կարգավորումների տրամաբանությունը և բացի այդ, նշված երկու նորմերով (Օրենքի 15-րդ հոդված, Կարգի 17-րդ կետ) կարգավորման առարկաները տարբեր են: Հատկանշական է նաև այն, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը չի սահմանում, իրավական հիմքը հստակ սահմանվում է Կարգի 17-րդ կետով:

Այսինքն, «Գնումների մասին»ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով կարգավորվում է գնումների պլանի ընդհանրապես հրապարակման անհրաժեշտությունը և ժամկետները,

իսկ Կարգի 17-րդ հոդվածով կարգավորվում է Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը, պարզաբանվում է, թե որն է հանդիսանում իրավական հիմքը, հատկանշական է, որ նշվում է միայն հրապարակված լինելու անհրաժեշտությունը և որևէ տեղ հղում չի պարունակում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկագրում հրապարակված լինելու մասին, մինչդեռ Կարգի այլ կետերում, այլ հրապարակումների մասով հստակ պահանջ կա տեղեկագրում հրապարակելու մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը որևէ կերպ չի կարող դիտարկվել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի կարգավորում կամ սահմանում, քանի որ նորմի մեջ որևէ բառ առկա չէ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի վերաբերյալ:

Նշված իրավիճակում պետք է քննարկման առարկա դարձնել միմիայն գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի առկայության հարցը. Այն է՝ արդյոք կարգի 17-րդ կետով սահմանված իրավական հիմքը առկա է եղել. հաշվի առնելով, որ Կարգի 17-րդ կետով որպես իրավական հիմքի առկայություն դիտարկվում է գնումների պլանի հաստատված և հրապարակված լինելը, ապա Պատվիրատուն գտնում է, որ Կարգի 17-րդ կետի իմաստով իրավական հիմքը առկա է եղել, քանի որ գնումների պլանը հրապարակված է եղել (տես՝ https://www.armeps.am/ppcm/public/procurements):

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ http://procurement.am/ կայքի աջ մասում ուղղակի հղում է առկա Armeps PPCM հարթակներին, որից հետևում է, որ դրանք փոխկապակցված են, հետևաբար այն դիտարկումը, որ գնումների պլանը հրապարակված չի եղել procurement.am կայքում՝ կրում է ձևական բնույթ և այդ կայքում հրապարակման պահանջը որպես գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի կկրեր ձևական պահանջի բնույթ:

Անհրաժեշտ է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի և Կարգի 17-րդ կետի կարգավորումները տարբերակել և դրանք դիտարկել, որպես տարբեր հարցերի կարգավորումներ, մասնավորապես տվյալ դեպքում անհրաժեշտ է գնումների գործընթացի կազմակերպման կոնկրետ, մասնավորեցված ‹‹իրավական հիմքի›› կարգավորումը (Կարգի 17-րդ կետով սահմանված) տարբերակել և դիտարկել առանձին, այլ ոչ թե ընդհանուր նորմով (Օրենք 15-րդ հոդված 3-րդ մաս) գնումների պլանի հրապարակման ժամկետների կամ հրապարակման անհրաժեշտության համատեքստում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 31.01.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով հաստատվել է գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

3. www.gnumner.am կայքում հրապարակված չէ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի ներառմամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի գնումների պլանը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 29.01.2020թ. ներկայացված բողոքը, ի լրումն բողոքի 01.02.2020թ. ներկայացված գրությունը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի գրությունները, «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգի հրավերը, www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հաստատվել են գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագրերը.

1.	Դիալիզատոր 1	Գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 100մլ, **մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ:** Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:

2.	Դիալիզատոր 2	Գերզտման գործակիցը մինչև 24մլ/ժամ մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.8 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, **մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ:** Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքի հետ համատեղելի: ISO և CE սերտիֆիկատների առկայությունը պարտադիր է:

Այսպիսով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքի առաջին մասով պնդել է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ չի նկարագրում ձեռքբերվող ապրանքը և այն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նշվել է մանրէզերծման ռադիացիոն մեթոդի միայն մեկ տեսակը՝ գամմա ճառագայթմամբ, սակայն չի նշվել երկրորդ մեթոդը՝ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր:

Այս տեսանկյունից արձանագրում եմ հետևյալը. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար նախատեսվել է մանրէազերծման մեթոդի երկու տեսակ՝ **մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ՝ հնարավորություն ընձեռնելով մասնակցին առաջարկել նշված երկու մեթոդներից որևէ մեկը:**

Իր հերթին գամմա ճառագայթմամբ մանրէազերծումը հանդիսանում է մանրէազերծման ռադիացիոն մեթոդի տարատեսակ: Ընկերությունը պնդում է, որ ռադիացիոն մանրէազերծման մյուս մեթոդը չմատնանշելը հանգեցնում է գնման առարկայի ամբողջական նկարագրված լինելու պահանջի խախտման: Այս տեսանկյունից, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներայացված փաստարկները, գտնում եմ, որ դրանք անհիմն են, քանի որ նախ՝ հրավերով սահմանվել է մանրէազերծման երկու կամընտրային մեթոդ, որն ընդլայնում է առաջարկվող ապրանքների շրջանակը, մյուս կողմից ռադիացիոն մեթոդներից մեկնումեկը մատնանշելը չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ նշված երկու մեթոդների միաժամանակյա առկայությունը պարտադիր պահանջ չէ: Տեխնիկական բնութագրում մանրէազերծման մեթոդը նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, որը բխում է պատվիրատուի գնման պահանջից: Նշված պահանջի սահմանումը չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, հատկապես 5-րդ մասի պահանջները:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ գնման առարկայի մանրէազերծման մեթոդի մատնանշումը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Գտնում եմ, որ բողոքը սույն մասով անհիմն է:

Ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքի երկրորդ մասով ներկայացված փաստարկները, գտնում եմ, որ դրանք հիմնավոր են, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **<u>գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները</u>**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **<u>հրապարակում է տեղեկագրում</u>**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **<u>տեղեկագիրը</u>** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) <u>գնումների պլանավորում</u>.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:</u> Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն

է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Նույն կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Այսպիսով՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am (նույն՝ www.gnumner.am) հասցեով գործող տեղեկագրում հրապարակված գնումների պլանի առկայությունն է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ուսումնասիրվել է www.procurement.am (նույն՝ www.gnumner.am) կայքում հրապարակված տեղեկատվությունը և արձանագրվել, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգի գնման առարկայի ներառմամբ Պատվիրատուի գնումները պլանը Ընթացակարգը հայտարարելու օրվա դրությամբ հրապարակված չէ: Արձանագրում եմ, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է գնման գործընթացի կազմակերպման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, Կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները: Գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 29.01.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/27» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**